հայերէն կարդալ ու գրել չը գիտէին։ Բայց բարեգործական ընկերութեան խորհրդի անդամները ոչ փիլիսոփայութիւն պէտք է անեն, ոչ էլ գրքեր խմբագրեն։ Ազնիւ, խելացի, եռանդոտ ադմինիստրատոր լինելու համար շատ անգամ համալսարանական ուսումը չէ օգնում։ Փող ժողովելու, կարգադրութիւններ անելու, պրոպագանդա անելու մէջ ոչ—համալսարանականներից երեք չորս հոգի, որոնք մտել են ընկերութեան խորհրդի մէջ, կարող են մեծ օգնութիւն տալ ընկերութեանը իրանց կապիտալի դիրքով, իրանց կապերով։ Իրանց մասնաւոր գործերը վարելու մէջ նրանք ցոյց տուեցին թէ վատ ադմինիստրատորներ չեն, թող նոյն եռանդը և ընդունակութիւնը գործ դնեն և ընդհանուր, ազգային գործին ծառայելով և հասարակութիւնը նրանց շատ շնորհակալ կը լինի։ Իսկ եթէ ռուս լրագրի յօդուածագրի ամբողջ յոյսը մեր ամեն հասարակական գործերում համալսարանականների վրա է, դարձեալ նա գոհ պէտք է լինի ընտրութիւններից, որովհետև մեծամասնութիւնը, հինգ թէ վեց հոգի ընտրված ինն անդամներից, դարձեալ բուն համալսարանականներն են։

—

Յայտնում ենք «Մշակի» ընթերցողներին Հաւլաբարում, որ մեր լրագիրը հատով է ծախվում Հաւլաբարում, պ. Կարապետ Ղազանջեան կօնդիտէրի խանութում։

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Ա. Քալանթարի հեղինակութիւնը ռուսերէն լեզուով Ռուսաստանի տաւարապահութեան մասին։ Այդ գիւղատնտեսական հետազօտութիւնը, որ տպված է ներկայ 1881 թ-ին Ս. Պետերբուրգում, կրում է հետևեալ վերնագիրը։ «Русскій скотъ, сравнительный очеркъ условій русскаго скотоводства.» А. Калантара։ Այդ գրքի մասին, որ բաղկացած է 74 երեսից, կաշխատենք խօսել մի այլ անգամ։

—

Մեզ գրում են ԻԴԴԻՐԻՑ։ «Այս ամսի 14-ին այստեղի ուսումնարանի դահլիճում գրականական երեկոյ եղաւ։ Բայց դժբաղդաբար ամբողջ հասարակութիւնը բաղկացած էր 8 հոգուց։» Թղթակիցը գանգատվում է այդ անտարբերութեան վրա իգդիրեցիների կողմից, բայց մենք կարծում ենք որ ամեն սկզբնաւորութիւնը միշտ դժուար և դանդաղ է լինում և մի գործ սկսողները չը պէտք է յուսահատվեն և պէտք է շարունակեն տոկունութեամբ իրանց ձեռնարկած գործը։

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ պ. Դ. Իւզբաշեանը մեզ գրում է։ «Անցեալ օր ստացայ Շուշուց այն բզէզների մի քանի օրինակներ, որոնք երևեցան այս և անցեալ տարի Անդրկովկասի դաշտերում։ Ցայտնվում է որ այդ բզէզները իսկ և իսկ «Anisoplia austriaca» անուանված բզէզներ են։ որոնց համար «Մշակի» մէջ արդէն մի քանասիրական էջ տպած։ Միջատներից առաջացած այս տարվայ վնասը 5000 ր. գումարի են գնահատում։»

—

Մեզ գրում են ՆՈՒԽՈՒՑ։ որ այդտեղի Աստուածածնի եկեղեցու գանձապետ Մարտիրոս Մարգարեանց, որ մի աշխոյժ և եռանդոտ ծերունի է, իր գանձապահութեան ժամանակ մօտ 12.000 բուբլի յետ է գցել եկեղեցու համար։ Բայց լաւ կը լինէր, աւելացնում է թղթակիցը, որ պարոնը, այնու ամենայնիւ, իւրաքանչիւր տարի բոլորը արդիւնքի և ծախքի հաշիւը կատարելապէս հրապարակօրէն ներկայացնէր ժողովրդին, որով և կազատվէր մի քանի բամբասանքներից։

—

Մեզ հաղորդում են որ Հաւլաբարի Էջմիածնեցոց եկեղեցու երեսփոխան ընտրվեցաւ պ. Կարապետ Թէմուրազեանց, բայց շնորհով մի քանի անձանց սրա ընտրութեան մէջ ևս խոչընդոտներ գտնվեցան և դրա հաստատութեան գործը ուշացնում են։ Խոչընդոտներից մէնն է մանաւանդ Գէորգ աւագ քահանայ Թէմուրազեանց և մի քանիսներ, որոնք անձնական հաշիւ ունենալով նոր երեսփոխանի հետ, համոզում են կօնսիստորիային չը հաստատել Թէմուրազեանցին, չը նայելով որ ժողովուրդը նրան մեծ համակրութիւն է ցոյց տալիս։

—

Լսում ենք որ նոր հիմնված հայոց բարեգործական ընկերութեան խորհուրդը առանձին նիստ է ունեցել երեք օր առաջ և ընտրել է խորհրդի նախագահ Ալէքսանդր Անանովին, իսկ փոխ-նախագահ գեներալ Տէր-Աստուրովին։ Կատարելապէս համակրում ենք այդ ընտրութիւններին։ Մենք քայլ առ քայլ կը հետևենք ընկերութեան գործունէութեանը և միշտ անկեղծ կերպով կը համակրենք նրա օրինաւոր գործերին և անխնայ կը հարուածենք եթէ նկատենք նրա մէջ տգեղ երևոյթներ։

—

Ցպում ենք ներկայ համարում վրաց «Դրօէբա» լրագրից մի յօդուած հայոց բարեգործական ընկերութեան մասին։ Մենք գտնում ենք չափազանց գովաբանութիւն այդ յօդուածի մէջ հայերի վերաբերմամբ։ Աստուած տայ որ մենք սրբախլված լինենք, բայց, որքան ճանաչում ենք հայերին, չի անցնի կարճ ժամանակ և ընկերութեան խորհրդի մէջ կը սկսվեն ինտրիգաններ և այլ տգեղ երևոյթներ։ Հայերից ամեն մէնը կարծում է թէ ինքն է միայն ստեղծագործութեան կատարելութիւնը։ Հայը իր եռը ամեն ազգային գործերից և շահերից վեր է դասում և պատրաստ է կործանել ամբողջ ազգը իր եռը պահպանելու համար։ Արդէն ընդհանուր ժողովների մէջ հիմնողները սկսեցին անսխալականութեան հակումներ ցոյց տալ։ Աստուած տայ որ հայի զգուելի եռը կրկին երևան չը գայ և այդ օգտաւէտ հիմնարկութեան մէջ։ «Մշակը» համաձայն չէ վրաց լրագրի գովասանքների հետ և մենք միշտ արթուն կը մնանք ամեն մի քայլի մասին որ կանի նոր ընկերութիւնը։

—

Ստացանք մի հատ Քիւրքճեանի ֆոտոգրաֆիական ժողովածուներից ազուլեցի պ. Մարգար Փանեանցի վրա և ստացանք նրանից 20 բուբլի։

—

Ստացանք Կ. Պոլսից մի տպված յայտարարութիւն Լօնդոնում հրատարակելի «The Oriental Gazette» լրագրի, որ յանձն է առնում պաշտպանել հայոց դատը։ Նրա խմբագրից էլ մասնաւոր նամակ ստացանք։ Կը խօսենք այդ մասին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Լրագիրները հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները Ֆրանսիական նոր մինիստրների անձնաւորութեան և անցեալ գործունէութեան մասին։

Գամբետտա արտաքին գործերի մինիստրի օգնական նշանակեց իր հաւատարիմ բարեկամ և աշխատակից Սպիւլլէրին։ Իրաւաբան և հրապարակախօս Եւգենի Սպիւլլէր 1870 թուականի հոկտեմբերի 7-ին Գամբետտայի հետ օդապարիկով դուրս եկաւ Փարիզից և եռանդով մասնակցեց ժողովրդական պաշտպանութեան գործին Գերմանիայի դէմ Ցուրի և Բօրդօ մէջ։ 1871 թուականին Սպիւլլէր Գամբետտայի օգնութեամբ հիմնեց „République Française“ լրագիրը և մի քանի տարի շարունակ այդ լրագրի գլխաւոր խմբագիրն էր։ 1876 թուականին նա պատգամաւոր ընտրվեցաւ։ Պատգամաւորների ժողովի մէջ նա նշանակվեցաւ արտաքին գործերի մինիստրութեան բիւդժետը քննող մասնաժողովի զեկուցանող և այդ պաշտօնի մէջ ցոյց տուեց, որ ինքը շատ լաւ ծանօթ է արտաքին քաղաքականութեան հետ։ Ֆինանսների մինիստր Ալեն Տարժէ նոյնպէս իրաւաբան է։ Նա ծնվել է 1832 թուականին Անժերի մէջ և կայսերութեան ժամանակ պրոկուրորի օգնականի պաշտօն էր վարում այդ քաղաքում։ 1864 թուականին նա հրաժարվեցաւ իր պաշտօնից, միացաւ ընդդիմադրական կուսակցութեան հետ և սկսեց լրագիրներին աշխատակցել։ 1870 թուականին նա Լուարայի գաւառի պրեֆեկտ նշանակվեց և մասնակցեց ժողովրդական պաշտպանութեանը, վարելով արևմտեան զօրքերի գործակատարի պաշտօնը։ Իրրև հրապարակախօս Ալեն Տարժէ պարապում էր ֆինանսական հարցերով։ Նոր մինիստրութեան մէջ ամենանշանաւոր անձնաւորութիւնը ժողովրդական լուսաւորութեան մինիստր Պոլ Բերն է համարվում։ Նա աւելի յայտնի է իրրև ֆիզիօլոգ, քան թէ իրրև քաղաքական գործիչ։ Պոլ Բեր իր գիտական կրթութիւնը ստացաւ Փարիզի մէջ, որտեղ 1863 թուականին նա ստացաւ բժշկութեան և բնական գիտութիւնների դոկտորի տիտղոսը։ 1867 թուականին նա Բօրդօի համալսարանի բժշկական բաժնի պրոֆէսորի տիտղոսը ստացաւ և, երբ յայտնի եղաւ իր գիտական աշխատանքներով, նա հրաւիրվեցաւ Փարիզ տեղական համալսարանի բժշկական բաժնի ֆիզիօլոգիայի պրոֆէսորի պաշտօնով։ Պոլ Բերի գործունէութիւնը քաղաքական ասպարէզի վրա սկսվեցաւ 1870 թ. սեպտեմբերի 4-ին։ Նա նշանակվեցաւ Եօննա գաւառի պրէֆէկտուրայի գլխաւոր քարտուղար։ 1874 թուականին նոյն իսկ այդ գաւառը նրան իր պատգամաւոր ընտրեց։ Պոլ Բեր պատկանում էր „հանրապետական միութեան“ կուսակցութեանը։ Նա շատ նըպաստեց ժողովրդական կրթութեան վերաբերեալ հարցերի մշակութեանը։ Նա մասնակցել է այդ հարցի քննութեան համար նշանակված բոլոր մասնաժողովներին և մեծ ծառայութիւն է մատուցել ժողովրդական կրթութեան գործին։ 1876 թուականին նա անդամ նշանակվեցաւ պատմական աշխատանքների մասնաժողովի, բազմաթիւ գիտական ընկերութիւնների անդամ ընտրվեցաւ և Կլոդ Բերնարի տեղ բիոլոգիական ընկերութեան նախագահ ընտրվեցաւ։ Պոլ Բեր բազմաթիւ աշխատութիւններ է հրատարակել անատոմիայի և ֆիզիօլոգիայի վերաբերութեամբ և ի միջի այլոց կառավարում էր „République Française“ լրագրի գիտական բաժինը։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի պաշտօնը Պոլ Բերին յանձնելը քաղաքական մեծ նշանակութիւն ունի, որովհետև նա կղերականութեան ոխերիմ թշնամի է համարվում։ Արդիւնաբերութեան և գեղարուեստների մինիստրութիւնը յանձնված է Անտոնին Պրուստին։ 1870 թուականի պատերազմի ժամանակ Պրու Գամբետտայի քարտուղարն էր և այնուհետև մտաւ „République Française“ լրագրի խմբագրութիւնը։ Դեռ 1866 թուականին Պրու պարլամենտի անդամ էր և պատկանում էր հանրապետական միութեան կուսակցութեան ձախ կողմին։ Նա առհասարակ պարապել է գեղարուեստական և գրականական կրիտիկայով։ Հասարակական աշխատանքների մինիստր Բայնալ շատ քիչ յայտնի է։ Նա հրէական կրօնին է պատկանում և մինչև այժմ վարել է մինիստրի օգնականի պաշտօնը։ Պատերազմական մինիստր կամպենիօն 1851 թուականի յեղափոխութեան ժամանակ հասարակ օֆիցեր էր։ Նապոլէօն III նրան աքսորեց Ֆրանսիայից։ Այնուհետև նա ծառայել է Ալժիրիայի մէջ։ Ֆրանս-գերմանական պատերազմի ժամանակ նա Մեցի մէջ պաշարված զօրքերի մէջ էր։ Այնտեղ նա վիրաւորվեցաւ և գերի տարվեցաւ։ Պ. Ծովային մինիստր Գուժար հրաժարված նաւապետ է։ Նա մասնակցել Սեվաստոպոլի պաշարմանը, իսկ 1870 թ. պատերազմի ժամանակ Լուարայի զօրքերի հրամանատարն էր և պատերազմել է Մօնսի մօտ։

—

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Նոյեմբերի 15-ին իշխան Բիսմարկ մի ճաշկերոյթ տուեց միացեալ խորհրդի անդամներին և այդ ժամանակ քաղաքական մի քանի յայտնութիւններ արաւ։ Ի միջի այլոց իշխանը ասաց, որ նա մտադիր է նորից առաջարկել պարլամենտին իր օրինագիծը սահմանադրութիւնը վերաքննելու մասին։ Բայց այս անգամ նա զիջումներ է անում, պահանջելով, որ բիւդժետը հաստատվի երկու տարվայ համար։ Նա համաձայն է իւրաքանչիւր տարի գումարել բայխստագը։ Այդ զիջումի մասին նա հեգնութեամբ նկատեց, որ այլապէս պարլամենտի անդամները անգործ կը մնային։ Մի քանի նկատողութիւններ անելով պարլամենտի և մամուլի ազդեցութեան մասին, նա խօսեց պարլամենտական նոր մինիստրութեան մասին Ֆրանսիայի մէջ, որի անդամներից մի քանիսը մամուլի ներկայացուցիչներ են։ Իշխան Բիսմարկ յիշեց, որ Գամբետտա ճըշմարիտ եղել է Գերմանիայի մէջ, անցել է Վարցինի մօտ, գուցէ կամեցել է այցելել իրան, բայց երևի նրա բարեկամները ըզգուշացրել են Գամբետտային, որ այդ այցելութիւնը վատ տպաւորութիւն կը գործի Ֆրանսիայի մէջ և այդ պատճառով Գամբետտա չայցելեց Բիսմարկին։ Այնուհետև իշխան Բիսմարկ սկսեց դարձնել գերմանական ներքին գործերի մասին խօսել։ Նա գառնութեամբ խօսում էր Մոմզենի մասին, որ նրան իրը թէ անիրաւացի նախատինքներ է անում։ Բիսմարկ յետագիմական չէ և չէ ձգտում աւատական նպատակներին։ Խօսելով վերջին ընտրութիւններից ստեղծված գործերի դրութեան մասին, իշխան Բիսմարկ ասաց. «Ցարաքդգբար պէտք է ես պահեմ իմ սիրելի նախագծերից մի քանիսը։ Եթէ մինչև անգամ այն շրջաններում, ուր մշակ դաշ մեծամասնութիւն է կազմում, ընտրութիւնները իմ դէմ էին, ուրեմն իմ նախագիծները մերժվում են մինչև անգամ այն մարդկերանցից, որոնց մասին հոգսերը տաքացնում են իմ ծերութիւնը։ Եթէ նրանք գոհ են իրանց դրութենից, թող այդպէս էլ մնան։ Ուժով բարերարութիւն չէ կարելի անել։ Ես ձանձրացայ յետ մղելով այն հարուածները, որոնց նպատակ եմ դարձել, աւելացրեց նա, և ուրախութեամբ կը յանձնէի ուրիշին ներքին հոգսերը, եթէ գտնվէր այդպիսի մէկը, որ կարողանար պարլամենտական մեծամասնութիւն կազմել։ Իշխան Բիսմարկ իր համար փոխանորդ կընտրի կամ կենտրօնական կամ ազատամիտ կուսակցութեան անդամներից մէկին։ Լսողները այնպէս հասկացան, որ նա օգուտ կը քաղի պետական կանցլերին փոխարինութեան մասին օրէնքից։ Խօսում են, որ գերմանական ներքին գործերը կարող են յանձնված լինել Ֆրանկենշտէյնին, Բենիգսենին կամ Ֆօրկենբէկին։ Իշխանի վերջին խօսքերի մէջ կարելի էր հեգնութիւն նկատել, միայն ընդհանուր տպաւորութիւնը այն էր, որ դրականապէս էր խօսում և ցոյց էր տալիս, թէ ինքը հպատակվում է իր վիճակին։ Բիսմարկ 'ի միջի այլոց ասեց, թէ դաշտերը և անտառները նրան վաղուց գրաւում են, բայց նա չէ կարող միայնակ թողնել ծերունի կայսրին։ Դրանք տարի սրանից առաջ, շարունակեց նա, ես ինձ հարց առաջարկեցի, թէ իմ գոր-

ծունէութեան վերջը էլի ի՞նչ կարող եմ տալ գերմանական ժողովրդին և ինձ թբուաց, որ ամենից լաւ կը լինէր թեթեւացնել ուղղակի հարկերը և բարձրաւել մշակ դասի դրութիւնը։ Բայց ամենքին միանգամից չէ կարելի բաղդաւորեցնել, թէպէտ ես յոյս ունէի իմ նախագիծներով բաղդաւորել բանւորներին։"

Վերջերս կայսրի գահական վերջին ճառը կը տարածվի գերմանական բոլոր համայնքների մէջ և կը կպցնվի պատերին իբրև պաշտօնական ափիշներ։

ՆԱՄԱԿ ՊԱՐՈՒԿԱՍՏԱՆԻՑ

Դավրէժ, 9 Նոյեմբերի

Անցեալ 7-ին տեղոյս մի քանի երիտասարդներ պ. Տ. Գորոյեանցի միջամտութեամբ ներկայացրին «Էնկիթեմուր» ողբերգութիւնը և Մոլիէրի «Mariage forcè» կոմեդիան։ Կատակերգութիւնը խաղացին թուրքերէն լեզուով։ Զը նայելով, որ այս երիտասարդներից գրեթէ ոչ մէկը թատրոն չէ տեսած, այնու ամենայնիւ ներկայացումը շատ յաջող անցաւ, մանաւանդ կոմեդիայի մէջ աւելի փայլեցաւ։ Այստեղ թատրոնի վերաբերութեամբ կարելի է ասել, որ բուն հայ ժողովրդի մէջ մի մեծ անտարբերութիւն և մի աստելութիւն է նկատվում դէպի թատրոնական գաղափարը։ որանց կարծիքով թատրոնը կարծես մի անբարոյականացնող հիմնարկութիւն է։ այս է պատճառը, թէ ժլատութիւնն է, թէ մի ուրիշ հանգամանք է, վերջապէս այդ կատարեալ անտարբերութիւնը երևում է նրանից, որ միշտ օթեակները լիքն են եւրոպացի նշանաւոր ընտանիքներով, հիւպատոսներով, բարձր պաշտօնական անձինքներով, իսկ դահլիճը՝ միայն պարսիկներով, որոնք աւելի են յարգում թատրոնը՝ քան թէ նոյն իսկ հայերը, որոնք շատ քան են պահանջում և շատ հասարակական պահանջներից հեռի փախչում։ Կոմեդիայի մէջ պ. Տ. Գորոյեանցը երկու փիլիսոփաների դերերում և պ. Փանուէլեանցը Սկանարէլի դերում մեծ փայլ ունեցան, իսկ ցաւալին այն է, որ այս երիտասարդների նեղութիւնները չեն վարձատրվում հասարակութիւնից։ Թատրոնական խումբը տեսնելով հայ հասարակութեան այս անտարբերութիւնը մտադիր է այսուհետև թուրքերէն խաղալ։

Աստակայ սարերի վրա արդէն բաւականին ձիւն է դրել և վերջին օրերումս Դավրէժում արդէն եղանակը պղտորվել է և երբեմն ձիւն է գալի, բայց չէ նստում։ Հասարակական կեանքը վերին աստիճանի լուռ է, մարդիկը անշարժ են, չէ նկատվում ոչինչ յառաջադիմութիւն և սրանց միակ զբաղմունքը միշտ փողն է և փողը։

Կ. Տէր-Աստուածատուրեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Գերմանական լրագիրները հաղորդում են, որ իշխան Բիսմարկ վճռեց յետաձգել իր տնտեսական վերանորոգութիւնները և բէյխստագին չի ներկայացնի նրանց վերաբերեալ օրինագծերը։ Նա այդ բոլորը յայտնեց խօսելով թագաժառանգի հետ։ Ամենքը համոզված են, որ կանցլերի գլխաւոր նպատակը կը լինի նախապատրաստել ժողովուրդը բէյխստագը այնպէս անելու համար։

—Անգլիական լրագիրները հաղորդում են, որ Իրլանդական լիգայի Նիւ-Եօրկի քարտուղարը հրատարակեց իր ստացած նուիրատուութիւնների հաշիւը, որոնք Իրլանդիային են ուղարկված։ 1881 թուի յունվարից ստորագրութեամբ 127.000 դոլլար հաւաքվեցաւ։ Լիգայի միւս ճիւղը իրլանդական գործի համար մի և նոյն ժամանակում հաւաքեց մօտ 170.000 դոլլար։

—Անգլիական «Times» լրագիրը նկարագրում է գերմանական բայխստագի մէջ կարդացած գահական ճառը բայխստագի բացման ժամանակ, հետևեալ երկու խօսքով։ «Դուրսը խաղաղութիւն, ներսը պատերազմ։»

—Թիւրքիան ծանուցագիր է ուղարկել պետութիւնների ներկայացուցիչներին, այն էլ միայն թիւրքերէն լեզուով գրած, թէ նա այսուհետև չը պիտի ճանաչէ հիւպատոսների քաղաքական գործերի մէջ միջամտութիւն անելը։ Դեսպանները յետ են ուղարկել այդ շրջաբերականը, ասելով թէ իրանք թիւրքերէն գրված շրջաբերական չեն ընդունում, այլ դիպլոմատիական միջազգային լեզու համարվում է ֆրանսերէնը։ Այս գործը, երևի, միջազգային մեծ կարեւորութիւն պիտի առնէ։

—Գերմանական կղերական օրգան «Germania» խստութեամբ քննադատում է, իր կուսակցութեան անունից, Բիսմարկ իշխանի բիւրօկրատիական կոմունիզմը, կառավարչական սոցիալիզմը և իշխանի կամայականութիւնը։

—«Московск. Телеграфъ» լրագրին հեռագրում են Վիէննայից, որ իւրաքանչիւր օր ուղարկվում են աւելի և աւելի բազմաթիւ զօրքեր դէպի Դալմացիա։ Հերցեգովինայի և Բոսնիայի ապստամբութիւնը, ինչպէս երևում է, Աւստրո-Ունգարիան կամենում է զինուորված ոյժով ճնշել։ Ապստամբութիւնը տատկանում է։

—Կոմս Կալնակի Վիէննայից այս օրերս ուղեւորվեց դէպի Ս. Պետերբուրգ։

—Կ. Պոլսից լրագիրներին հեռագրում են, որ Բ. Դուռը զինաւորում է եռանդուռ կերպով իր զօրքերը, կարծելով որ կը հանդիպի աւստրիական զօրքերին Սալոնիկի մօտ։ Աւստրիային սահմանագլուխ բերդերը թիւրք կառավարութիւնը ամրացնում է։ Իսկ յունաց սահմաններից էլ զօրքերը Բ. Դուռը տեղափոխում է կոսսովեան վիլայէթ, Նովո-Բազար, Միտրովիցա և աւստրիական սահմանների մօտ այլ տեղերը։

—Ինչպէս յայտնի է Բոսնիայի և Հերցեգովինայի ապստամբները ուղերձ ներկայացրին Անգլիային, գանգատվելով Աւստրիայի կամայականութեան դէմ և յայտնելով որ Աւստրիան իրաւունք չունէր զինուորագրութիւն մտցնել Բոսնիայում և Հերցեգովինայում և այդ նահանգների բնակիչներից զօրք պահանջել։ Ուրիշ կողմից թիւրքաց կառավարութիւնը չրջաբերական ուղարկեց եւրոպական պետութիւններին, յայտնելով որ Աւստրիան իրաւունք չունէր յիշեալ նահանգների մէջ զինուորագրութիւն մտցնել, քանի որ աւստրո-ունգարական պետութիւնը Եւրոպայի համաձայնութեամբ ժամանակաւորապէս է տիրում այդ նահանգների վրա, որոնք անցած դաշնագիրների հիման վրա դեռ ևս ճանաչվում են թիւրքիայի աւատական իշխանութեան տակ։

—Փարիզից հեռագրում են ռուս լրագիրներին, որ ֆրանսիական ազգային ժողովը նոր կրեդիտ նշանակեց Յունիսի մէջ պատերազմը շարունակելու համար։

—Կրակովում կազմվեցաւ մի մամանաժողով երեսի լեհացի քանասեղծ Միցկեվիչի յիշատակին արձան դնելու հարկաւոր պատրաստութիւնները տեսնելու համար։

—Մեծ իշխան Կոնստանտին Նիկոլայեվիչ հասաւ Փարիզ։

—«National-Zeitung» լրագիրը կարծում է որ Բիսմարկ դիտաւորութիւն ունի ընդդիմադրել բայխստագին և սահմանափակել նրա իրաւունքները։

—Բերլինի լրագիրները հաղորդում են, որ Վիլհելմ կայսրի առողջութիւնը դեռ կատարելապէս վերականգնեցրած չէ, այնպէս որ նա իր սենեակից դեռ չէ դուրս գալիս և ստորագրում է միմիայն ամենահարկաւոր թղթերը։

—Իտալական լրագիրները հաղորդում են հետևեալը։ Պատգամաւորների ժողովի մէջ պատահած արդէն յայտնի դէպքը, ուր մէկ մարդ լցրած հրացան էր գցել «Դէպրէտիսի համար» խօսքերով, կապ ունի Իտալիայում արմատական կուսակցութեան մէջ տիրապետող ընդհանուր յուզմունքի հետ, որը ծագել է թագաւորի և նրա մինիստրների «երկրպագութեան համար» Վիէննա գնալու պատճառով։ Շատ տեղերում աղմկալի ցոյցեր եղան կառավարութեան դէմ։ հանրապետական պրոկլամացիաներ յայտնվեցան, որոնց մէջ Հումբերտ թագաւորը գանձնկէց է յայտնված այն պատճառով, որ նա «աւտորիական գնդապետ դարձաւ» և հրաժարվեցաւ Տիրոլի և Տրիէստի վրա ունեցած իրաւունքներից։ Մի քանիսները կալանաւորված են։

—Գերմանական լրագիրները հաղորդում են հետևեալը։ Նախագահական ընտրութիւնները բէյխստագում ապացուցին կենտրոնի առաջնակարգ ազդեցութիւնը այդ ժողովի մէջ։ Այդ աչքի առաջ ունենալով, վատ չէր լինի յիշել Բերլինի և Վատիկանի մէջ եղած իսկական յարաբերութիւնները, որոնց մասին գահական ճառի մէջ չէր յիշված։ Մինչև սեպտեմբերի կէսը կղերականների յոյսերը մեծանում էին, և ինչպէս յայտնի է, արդէն լուր տարածվեցաւ արձակված եպիսկոպոսների վերադարձի մասին, որպէս հետևանք Շլէսվիգի ունեցած բանակցութիւնների Վատիկանի հետ։ Կղերական լրագիրները, որոնք իրանց տեղեկութիւնները ամենաճիշդ աղբիւրներից էին քաղում, հաստատեցին այդ փատը։ Այժմ այդ լուրերը դադարեցին։ Հէնց այն ժամանակ, երբ բանակցութիւնները վերջանալու վրա էին, ըստ երևոյթին, մէկ նշանաւոր անցք պատահեց, որը ամբողջ գործը վնասեց։ Այդ հանելուկը երևի ապագան կը բացատրէ։ Ինչ և լինի, բայց Շլէսվիգը Հռոմից դատարկ վերադարձաւ։ Ասում էին, իբր թէ կղերականները մեծացրին իրանց պահանջները պապական գահի միջազգային դրութեան վերաբերութեամբ։ Արդեօք կաջողվի բէյխստագին վճռել այդ հարցը, որ Գերմանիայի արտաքին քաղաքականութեան է վերաբերում, այդ կը ցոյց տան բիւդժէտի մասին լինելի վիճաբանութիւնները, որոնց մէջ կորոշվի կենտրոնի ուժը։

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ կոմս Սէն-Վալիէ այցելեց Գամբէտային և վերջինից բաւական սառն ընդունվեցաւ։ Գամբէտան իր զարմանքը յայտնեց երեք դեսպանների միաժամանակ հրաժարականի առիթով։ Սէն Վալիէ մատնացոյց արաւ, որ անձնական պատճառները դրդեցին իրան հրաժարական տալ։ Նա ակնարկեց նոյնպէս նոր մինիստրութեան պրոգրամայի արմատական բնաւորութեան վրա։ Գամբէտտա բացատրեց, որ իր քաղաքականութիւնը նախ և առաջ խաղաղութիւնը պահպանելու մէջ կը կայանայ։ Ուրիշ հարցերի վրա խօսակցութիւնը չը շարունակվեցաւ։

—Վիէննայի «Tageblatt» լրագրին Բերլինից հեռագրում են Նոյեմբերի 10-ից հետևեալը։ Ասում են, որ թագաժառանգը հրաժարվեց գահական ճառը կարդալուց բէյխստագը բանալու ժամանակ, որովհետև նա համաձայն չէ այդ ճառի մի քանի տեղերի հետ։ Կայսրը այժմ մի փոքր լաւ է, բայց մարմնդութիւնը խանգարված է։

—«Presse» լրագրին Սոֆիայից հեռագրումեն, որ Մակեդոնիայից ստացված վերջին լուրերը այնտեղ մեծ աղմուկ են հանում։ Ասում են որ Թիւրքաց օֆիցերները և զինուորները Էդրի-Պալանկա շրջանում քրիստոնեաների մէկ ամբողջ ընտանիք կոտորեցին, և բացի դրանից գերի տարան չորս տղամարդիկ, երեք կանայք և վեց երեխաներ։ Թիւրքերը մօտ 200 ֆունտ փող են տարել։ Կատաղիայի շրջականներում աւազակները իւրաքանչիւր օր քարուքանդ են անում գիւղերը։ Բոլոր Մակեդոնիայի մէջ կատարեալ անիշխանութիւն է տիրապետում։

—«Indépendance Belge» լրագիրը հաղորդում է, որ փարիզի նոր մինիստրութիւնը հրամանագրեց բոլոր պրէֆէկտներին, յիշեցնելով նրանց պարտականութիւնները և արգելելով նրանց յանախակի փարիզ գալը, որը կարող է վայր գցել նրանց հեղինակութիւնը և վնասել իրանց կառավարչութեան յանձնված նահանգների շահերին։ Խօսքը և գործը մէկ անելով, ներքին գործերի մինիստր Վալդէկ-Ռուսսո հրաժարվեց ընդունել մօտ տասը պրէֆէկտներին, որոնք եկել էին ներկայանալու նրան, և առաջարկեց նրանց անյապաղ վերադառնալ իրանց տեղերը։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Сѣв. Газ.» լրագիրը հաղորդում է, որ Տօմսկի քաղաքային հիւանդանոցի խնայողարանների բաժնում 1875 թուից պահվում է մէկ անյայտ խուլ և համր թափառական մարդ, որը մեղադրված էր մարդասպանութեան մէջ և խելագար է ճանաչված։ Սեպտեմբերի 17-ին այդ համր և խուլ մարդը սկսեց խօսել. բանից երևեցաւ, որ նա երբէք համր և խուլ չէ եղել, և 13 տարվայ ընթացքում իրան համր էր ձևացնում։ Առաջին հարցափորձից յետոյ նա ցոյց տուեց, որ ինքը ազգով լեհացի է, կրօնով կաթոլիկ և 60 թուականների վերջում ուղղափառութիւն ընդունեց Մոսկվայում։ Նրա ազգը, ինչպէս ինքն ցոյց տուեց, Իվանով է։ Երկարատև լռութեան պատճառով նա համարեա յետ սովորեց խօսել, բառերը արտասանում է հազիւ լսելի ձայնով և անկանոն։ Այդ զարմանալի անձնաւորութեան քննութիւնը յետաձգված է։ Վերջը, երևի կիմացվի, թէ ինչ պատճառները ստիպեցին նրան խախտել իր 13 տարվայ լռութիւնը։

* * *

Լօնդոնում կենդանիների հովանաւորութեան ընկերութիւնը դատի կանչեց Կինգս-Կոլէջի դատաստանական բժշկականութեան պրոֆէսոր Դաւիթ Սարիէին, որը երկու կապիկների վրա բժշկական փորձեր էր կատարել։ Դատարանի դահլիճը լցվեցաւ բժշկականութեան ուսանողների աղմկալի խմբով։ Գիտնականին պաշտպանում էր Գոլլի, իսկ կենդանիների հովանաւորութեան ընկերութեան կողմից մեղադրում էին Բիսլի և Կոլրիջ։ Դատարանում ներկայ էին շատ տիկիններ, որոնք վերոյիշեալ ընկերութեան անդամներ էին։ Դատարանը արդարացրեց մեղադրվածին, որովհետև մեղադրող կողմը չը կարողացաւ ապացուցանել, որ փորձերը անկանոն էին կատարված։

* * *

Մէկ հարուստ ամերիկացի, որ համարեա խելագարված էր բարձր լեռների վրա բարձրանալու ցանկութեամբ, իր կեանքի մէջ իզուր չորս անգամ փորձեց բարձրանալ Մոնբլան լեռան վրա։ Այդ բանը այնքան տխրեցնում էր նրան, որ նա երդվեց մեռած կամ կենդանի լինել այդ լեռան վրա։ Բայց վերջին յուսահատ փորձը սկսելու ժամանակ, նա հիւանդացաւ և հազիւ ժամանակ ունեցաւ կտակ թողնել։ Նա իր բոլոր կարողութիւնը կտակեց իր երեք ազգականներին, միայն այն պայմանով, որ նրանք իր դիակը Մոնբլան լեռան գագաթի վրա տանեն։ Ժառանգները բերեցին իրանց հօրեղբօր դիակը և պատրաստութիւններ տեսան նրա վերջին կամքը կատարելու համար։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 Նոյեմբերի։ „Новости" լրագիրը հաղորդում է. զինուորական հագուստի փոփոխման մասին լուրը հաստատվեցաւ։ Նոյեմբերի 18-ին ժամի 3-ին վերջացան վիճաբանութիւնները Շերվաշիձէի գործի մասին։ Դատարանի խորհրդակցութիւնը հինգ ժամ էր տևում։ Դատավճիռը հետևեալն է. մեղաւոր է, յանցանք գործել է բարկացած ժամանակ։ Զրկել իշխանական և ազնուական արժանաւորութիւնից և այլ իրաւունքներից և աքսորել Արխանգելսկայա նահանգը երեք տարով։ Ցօգուտ Սարունիկովի 5000 լուբլ առնել։ Բայց ի նկատի առնելով վնասվածների վարմունքը, որոնք անպատուեցին իշխան Շերվաշիձէին անձնականապէս և իբրև օֆիցէրի, միջնորդել թագաւորի առաջ, որ պատիժը փոխարինվի երեք տարի բանտարկութեամբ, ծառայութիւնից արտաքսելով ատանց իրաւունքներից զրկելու։ „Новости" լրագիրը հաղորդում է. զինուորական շրջանների փոփոխման ժամանակ ենթադրված է հեշտացնել զօրքերի խաղաղ դրութիւնը պատերազմական փոխելը, գրագրութեան տեղ հեռագրական հաղորդակցութիւն հաստատելով։ Պատերազմական կանցելարիաների համար տեսչի պաշտօն է նշանակվում, որ յանձնվում է կապիտանին։ Զինուորական ուսումնարանները Ապուխտինին են յանձնվում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 Նոյեմբերի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 94 ր. 75½ կ., երկրորդ 91 ր., երրորդ 92 ր., չորրորդ 91 ր. 25 կ., հինգերորդ 90 ր. 62 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 221 ր. 80 կ., երկրորդ 214 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 89 ր. 87½ կ., երկրորդ 90 ր. 75 կ., երրորդ 90 ր., ոսկի 7 ր. 70½ կ։ Ռուսաց 1 լուբլ Լօնդոնի վրա արժէ 25,56 պէնս, ռուսաց 100 լուբլ Համբուրգի վրա արժէ 218 մարկ 5 պֆ., փարիզի վրա 269 ֆրանկ 5 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ